

Ը. ՍՈՂՈՄԷ՛ ԴՈՒՍՏՐ ԵՐԵՄԻԱՅԻ. — Տեսանք վերև (էջ ԺԹ) թէ Երեմիա իր 14 ամսուան զաւակին՝ Յովսէփիկի մահուան առթիւ էջմիածին իր որդւոյն՝ Գրիգորիս վարդապետի ուղղած նամակին մէջ ըսած է. «Լուար զորս ի քերցն ուսեալ (Յովսէփին) զտաղաչափութիւն զերգոց հիւսմանց» (Յաւել. էջ 449): Այս տողերէն բացայայտ է թէ Երեմիա՝ բացի իր երեք արու զաւակներէն՝ ունեցած է մէկէ աւելի գուստրներ՝ քոյրերը իր Յովսէփիկին:

Զ. Ակինեան կը գրէ. «Երեմիայի գուստրներու անուաները անձանօթ կը մնան»⁽¹⁾: Իսկ ըստ Զ. Ս. Երեմեանի՝ Չէլէպի ամուսնացած է և ունեցած է Սոզոմէ անուն աղջիկ մը, որ վաղահաս եղած է ինը տարեկան ծաղիկ հասակին⁽²⁾:

Երեմիա իր Սոզոմէ աղջկան մահուան առթիւ յօրինած է եօթը ընդարձակ տուներէ բաղկացեալ Գանձ մը (Յաւել. էջ 627-32) ու անոր կցած է վախճանեալին բերնէն դիմառնաբար մօրը ուղղեալ 18 տուներով թուրքերէն Ողբ մը (էջ 632-4): Այս գրուածներէն կը տեղեկանանք թէ Սոզոմէն ամուսնացուցած են իր 14 տարեկանին (տողք 172 և 173).

«Պիր թէն գօնչէ օնտօրօնտէ պէն հէնիզ,
Կեօզ իւմուպտա թէզճէ էրէ վէրտընըզ»:

Սոզոմէ ունեցած է միակ մանչ զաւակ մը, որ Երեմիայի կորսնցուցած կրտսեր զաւակին անունով կոչուած է Յովսէփ, և որ հինգ անգամ յիշատակուած է հօրը իր վրայ յօրինած Գանձին և դիմառնական Ողբին մէջ (տողք 14, 73, 181, 187, 242): Գանձին մէջ կը գրէ Երեմիա (տողք 161-4).

(1) Չէլէպի, էջ 40:

(2) Երեմիա Չէլէպի, յօդուած Զ. Ս. Երեմեանի, Բագմալէպ, 1903, էջ 367 ծնթ.: